ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Բյուջեում նախատեսվող փոփոխությունների

Հիմք ընդունելով Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ/իրավաբան Սուսաննա Սահակյանի 2024 թվականի մայիսի 24-ի զեկուցագիրը և համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է վարչական բյուջեի պահուստային ֆոնդի 11.1.2 ծրագիր 4891 հոդվածից՝

1. 1900000 ՀՀ դրամ տեղափոխել 01.1.1 ծրագիր 4241 հոդված՝ իրավաբանական ծառայություններ ձեռքբերելու համար:

Հիմք ընդունելով Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության բաժնի գլխավոր մասնագետ, բաժնի պետի պարտականությունները կատարող Վ. Թանգյանի 2024 թվականի հունիսի 3-ի զեկուցագիրը և համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է ֆոնդային բյուջեի 04.5.1 ծրագիր 5113 հոդվածից՝

1. 400000 ՀՀ դրամ տեղափոխել 08.2.3 ծրագիր 5113 հոդված՝ <<ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ>> ՀՈԱԿ-ի շենքի սեյսմիկ խոցելիության աստիճանի գնահատման ծառայություններ ձեռքբերելու համար:

Հիմք ընդունելով Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետի 2024 թվականի մայիսի 27-ի զեկուցագիրը և համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է ֆոնդային բյուջեի 04.5.1 ծրագիր 5113 հոդվածից՝

1. 440000 ՀՀ դրամ տեղափոխել 01.1.1 ծրագիր 5122 հոդված՝ Սիսիանի համայնքապետարանի վարչական շենքի տեսահսկման համակարգի գործող սարքերի և մալուխների նորացման ծառայություններ ձեռքբերելու համար:

Հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է վարչական բյուջեի պահուստային ֆոնդի 11.1.2 ծրագիր 4891 հոդվածից՝

1. 1800000 ՀՀ դրամ տեղափոխել 01.6.1 ծրագիր 4241 հոդված՝ աուդիտի ծառայություններ ձեռքբերելու համար:

Հիմք ընդունելով Սիսիանի համայնքապետարանի և ՀՀ Սյունիքի մարզպետարանի միջև կնքված ընթացիկ սուբվենցիա տրամադրելու մասին թիվ ՍՄԸՍՀ-04 պայմանագիրը և համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է հետևյալ գումարի պլանավորումը համայնքի բյուջեի եկամտային և ծախսային մասերում.

1. <<Է. Ասյանի անվան Սիսիանի մանկական երաժշտական դպրոց>> ՀՈԱԿ –ին ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցում իրականացնելու համար նախատեսվում է 09.5.1 ծրագիր 4511 հոդվածում ավելացնել 1743100 (մեկ միլիոն յոթ հարյուր քառասուներեք հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ, որն տրամադրվում է պետության կողմից և պլանավորվում է նաև վարչական բյուջեի ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ (ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ) եկամտային մասում:

Ֆինանսատնտեսական բաժնի պետ **Դ. Այվազյան**

04.06.2024թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Սույն նախագծի ընդունումից հետո համայնքի բյուջեի եկամուտներն ու ծախսերը կավելանան 1743100 (մեկ միլիոն յոթ հարյուր քառասուներեք հազար մեկ հարյուր) ՀՀ դրամով:

Ֆինանսատնտեսական բաժնի պետ **Դ. Այվազյան**

04.06.2024թ.